

---

---

## ԼՈՒՍԱՎՈՐ ՀԵՏՔ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԾԻՐՈՒՄ



2013 թ. հունիսի 14-ին, կյանքի 51-րդ տարում, ուժերի ծաղկուն շրջանում, տևական ու ծանր հիվանդությունից հետո իր մահկանացուն կնքեց ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Նոր պատմության բաժնի առաջատար գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու, առաջին դասի խորհրդական Ռուբեն Հենրիկի Գասպարյանը:

Օնվել է մտավորականի ընտանիքում: Արմատները գալիս են Լոռուց և Վանից:

1979 թ. Ռ. Գասպարյանն ավարտելով Երևանի Ե. Չարենցի անվան թիվ 67 միջնակարգ դպրոցը՝ ընդունվում է Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի պատմա-աշխարհագրական ֆակուլտետի պատմության և մանկավարժության բաժինը,

որն ավարտում է գերազանցությամբ 1984 թ.՝ ստանալով պատմության և հասարակագիտության ուսուցչի, դաստիարակչական աշխատանքների մեթոդիստի որակավորում: Նշենք, որ ուսումնառության տարիները զուգակցել է մանկավարժական գործունեությանը՝ Ծաղկաձորի պիոներական ճամբարներում:

1984 թ. մինչև 1989 թ. աշխատել է Աբովյանի շրջանի (այժմ՝ Կոտայքի մարզ) Ակունք գյուղի միջնակարգ դպրոցում՝ որպես պատմության ուսուցիչ: Նույն թվականին ընդունվել է Հայաստանի ԳԱ պատմության ինստիտուտի ասպիրանտուրա:

1989 թ. մինչև 1996 թ. դասավանդել է Երևանի թիվ 57 միջնակարգ դպրոցում՝ որպես պատմության և հասարակագիտության ուսուցիչ: Մանկավարժական աշխատանքը զուգակցել է գիտական գործունեությանը:

1991 թ. Ռ. Գասպարյանը պաշտպանում է թեկնածուականատենախոսություն՝ «Գիլիկիայի հայության սոցիալ-քաղաքական կյանքը 1900- 1921 թթ.» թեմայով և ստանում պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Նույն թվականին աշխատանքի է ընդունվել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Նոր պատմության բաժին՝ որպես գիտաշխատող, 1991 թ. մինչև 1997 թ. վարել է ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների խորհուրդը, իսկ 1995 թ. մինչև 1999 թ. եղել է նույն հաստատության գիտական քարտուղարը:

1999 թ. մինչև 2009 թ. վարել է ՀՀ Կրթության և գիտության նախարարության Բարձրագույն կրթության, ապա նախարարության աշխատակազմի բարձրագույն մասնագիտական կրթության, նախարարության աշխատակազմի բարձրագույն և հետբուհական կրթության վարչության պետի պաշտոնը: Միաժամանակ, շարունակել է իր գիտամանկավարժական աշխատանքները: Համատեղության կարգով դասավանդել է Երևանի պետական համալսարանի

մագիստրատուրայում՝ կարդալով հատուկ կուրս՝ «Հայ կամավորական շարժումների պատմություն (XIX դար - 1921 թթ.)»:

2009 թ. աշխատանքի է անցել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Նոր պատմության բաժին, իսկ 2010 թ. հուլիսի 1-ից մինչև 2011 թ. հունիս դեկավարել է ինստիտուտի Հայկական հարցի և հայոց ցեղասպանության բաժինը: Նույն ամսից տեղափոխվել է Նոր պատմության բաժին, որտեղ աշխատել է մինչև իր վախճանվելը: Գիտնականը գրեթե վերջացրել էր դոկտորական ատենախոսության հետ կապված աշխատանքները, սակայն ծանր հիվանդությունը թույլ չտվեց ավարտին հասցնել ուսումնասիրությունը: ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտը նախատեսում է 2014 թ. հրատարակել հետազոտությունը:

1991 թ. Հայաստանի անկախությունը վերականգնելուց հետո անհրաժեշտ էր միջնակարգ դպրոցն ապահովել նոր դասագրքերով, որտեղ նորովի և ճշմարտացի կարտացոլվեր Հայոց պատմությունը: Բանն այն է, որ խորհրդային տարիներին Հայաստանի դպրոցներում «Հայ ժողովրդի պատմություն» առարկան անցնում էին խիստ սահմանափակ ծավալով ու համապատասխան գաղափարական պարտադրանքներով:

Հասարակությունը կարոտ էր Հայոց պատմության ճշմարտացի լուսաբանմանը: Այդ էր պատճառը, որ մամուլն իր էջերը տրամադրում էր պատմաբաններին, գրականագետներին, որոնք իրենց հոդվածներով ժողովրդին ներկայացնում էին հայրենի պատմության տարբեր ժամանակաշրջանները: Անհրաժեշտ էր հասարակությանը ոգևորել հայության հերոսական պատմության տարբեր դրվագներով: 1989-1991 թթ. Հայաստանի սահմանամերձ բնակավայրերը պաշտպանող և Արցախում մարտնչող ազատամարտիկը պետք է էլ ավելի քաջատեղյակ լիներ իր պատմությանը, գիտակցեր, թե ինչի համար է մարտնչում: Քանի որ դեռևս հրապարակի վրա չկար միջնակարգ դպրոցի «Հայոց պատմության» նոր դասագիրք, ուսուցիչներն իրենց դասավանդումների ընթացքում լայնորեն օգտագործում էին լրատվամիջոցների հրապարակումները: Մամուլում ազատագրական թեմաների վերաբերյալ իր հրապարակումները ևս նպատակ ունեին ոչ միայն Հայաստանի, այլև սփյուռքի հայությանը ծանոթացնել մեր պատմության կարևորագույն դրվագներից մեկի՝ Կիլիկիայի հայության մաքառմանը:

1992 թ. հոկտեմբերի 20-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում հրավիրվում է գիտական խորհրդի ընդլայնված նստաշրջան՝ նվիրված Ջեյթունի 1862 թ. ապստամբության 130-ամյակին: Նստաշրջանին մասնակցում էին նաև «Ջեյթուն» հայրենակցական կրթամշակութային միության անդամները: Ի թիվս այլոց, զեկուցումով հանդես է գալիս Ռ. Գասպարյանը՝ եզրակացնելով, որ ողջ մնացած զեյթունցիներն իրենց փրկությամբ պարտական էին հիրավի հերոսական ինքնապաշտպանական մարտերին:

1993 թ. գիտնականը հրատարակում է հոդված՝ նվիրված 1915-1916 թթ. Կիլիկիայում երիտթուրքերի կողմից հայերի նկատմամբ իրականացված կոտորածներին: Նա առանձնացնում է այն փաստը, որ օսմանյան իշխանությունները հայերի զանգվածային բռնագաղթը սկսում են Կիլիկիայից, որին հաջորդում է Արևմտյան Հայաստանը: Ռ. Գասպարյանը ընթերցողի ուշադրությունը հրավիրում է մի խումբ զեյթունցիների կողմից իրականացված դիմադրությանը, որը գլխավորել է Եղիա Նորաշխարհյանը (Ենիտունյան):

Անառարկելի վաստակ ունի Ռ. Գասպարյանը Հայաստանի նոր դպրոցի պատմության դասագրքերի ստեղծման գործում: 5-8-րդ դասարանների Հայոց պատմության դասագրքերը, որոնք 1993 թ. սկսած՝ վերահրատարակվել են քանիցս

(ակադ. Վ. Բարխուդարյանի խմբագրությամբ), և որոնց իր ինքնատիպ հատվածներով հեղինակակցել է Ռ. Գասպարյանը, հիրավի, բռնել են ժամանակի քննությունը:

2003 թ. Ռ. Գասպարյանը մասնակցում է «Հայ եկեղեցու պատմություն» (8-րդ դասարանի համար) դասագրքի ստեղծմանը (խմբագրությամբ՝ Պ. Հովհաննիսյանի և Աբրահամ եպիսկոպոս Մկրտչյանի):

1999 թ. հրատարակվում է Ռուբեն Գասպարյանի մենագրությունը՝ «Կիլիկիահայությունը 20-րդ դարի սկզբին» վերնագրով:

1909 թ. Կիլիկիայի հայության կոտորածի մասին գրվել են բազմաթիվ ուսումնասիրություններ, հրատարակվել են հայ և օտար ականատեսները՝ իր ու պատմաբանների վկայություններն ու հետազոտությունները: Եվ թվում էր, թե հնարավոր չէ որևէ նոր փաստ կամ այլ բաց թողնված իրադարձություն կամ դեպք վկայակոչել: Ի պատիվ Ռ. Գասպարյանի, ասենք, որ հեղինակը կարողացել է իմի բերել առկա պատմագիտական գրականությունը, արխիվային փաստերն ու ժամանակի մամուլը՝ եզրակացրել, որ կոտորածները կազմակերպել են, այսպես կոչված, «հին ու նոր» կառավարությունները՝ արդուլհամիդյան ու «հեղափոխական»:

Աշխատությունում առանձին գլուխ է նվիրված 1909 թ. Կիլիկիայի ինքնապաշտպանական մարտերին: Ռ. Գասպարյանը պարտադիր է համարում հայերի դիմադրական կռիվների ուսումնասիրությունը, որոնց պետք է «առանձնահատուկ տեղ և դեր հատկացնել»:

Ռ. Գասպարյանը ներկայացնում է Ադանայի, Դյորթ-Յոլի, Սսի, Շելիս-Մուրադի (Շարդեր), Բաղչեի, Հաճընի, Մարաշի և այլ վայրերի հայության գոյամարտերը: Քննարկելով դիմադրական մարտերը՝ պատմաբանը եզրակացնում է. «1909 թ. հերոսամարտերը մեկ անգամ ևս ապացուցեցին, որ թուրքական արյունոտ յաթաղանից փրկության միակ հույսը զինված, կենաց ու մահու պայքարն է»:

Ռ. Գասպարյանն քննում է Կիլիկիայի հայությանը հասցված վնասը: Այն հաշվարկելու համար օգտագործել է ինչպես հրատարակված, այնպես էլ արխիվային տեղեկությունները: Ըստ ֆրանսիացի պատմաբան ժորժ Բրեգոյի հաշվումների, նյութական վնասը կազմել է 20 միլիոն թուրքական լիրա: Սրա մեջ չեն մտնում 80 հազար հայերը, այդ թվում՝ ծնողագուրկ երեխաները, որոնք կորցրել են իրենց ունեցվածքը և հարկադրված են եղել գրկանքների մեջ քարշ տալ իրենց գոյությունը:

Վկայակոչված փաստերը բերում են այն եզրակացության, որ օսմանյան իշխանությունների կազմակերպած հայերի՝ զանգվածային ջարդերն ունեցել են քաղաքական ու տնտեսական դրդապատճառներ:

Ռ. Գասպարյանն առանձնացնում է այն կարևոր հիմնահարցը, թե ովքեր էին կազմակերպել Ադանայի ջարդերը՝ «հին», թե՞ «նոր», իշխանությունները: Պատմաբանը քննում է ժամանակի և հետագա ուսումնասիրությունները: Վկայակոչելով թուրք պատմաբան Մուրադ Բեյին, Հենրի Գիբբոնսին, անգլիացի պատմաբան Ֆ. Դաքեթին և այլոց՝ եզրակացնում է, որ կոտորածները նախաձեռնվել էին դեռևս 1906-1907 թթ. Աբդուլ Համիդ II-ի վարչակարգի և երիտթուրքերի կողմից: Ռ. Գասպարյանը գրում է. «Կիլիկիայի կոտորածները կազմակերպվեցին ինչպես երիտթուրքերի, այնպես էլ հին վարչակարգի պաշտոնյաների կողմից: Հայաջինջ ծրագրերի իրականացման գործում «Միություն և առաջադիմություն» կուսակցության ձգտումները համապատասխանում էին համիդյան ռեժիմի պաշտոնյաների նպատակների հետ»:

2005 թ. հրատարակվեց Ռուբեն Գասպարյանի նոր աշխատությունը: Ռ. Գասպարյանը քննարկում է հայ բնակչության դրությունը ոչ միայն Կիլիկիայում, այլև ողջ Արևմտյան Հայաստանում: Պատմաբանն ընթերցողի ուշադրությունն է հրավիրում Օսմանյան կայսրությունում բնակվող ազգային փոքրամասնությունների, այդ

թվում՝ հայերի անտանելի դրության վրա: Կառավարության կողմից հովանավորվող թուրք ցեղապետերը բառացիորեն կողոպտում էին հայ գյուղացիությանը: Համանման վիճակ էր Կիլիկիայում: Կիլիկիահայերը վճարում էին բազմաթիվ հարկեր՝ դաժան հարկահանության ենթարկվելով նաև մահմեդական կրոնավորների կողմից:

Աբդուլ Համիդ II-ի օրոք կառավարող վերնախավը որդեգրում է պանիսլամիզմի (համախալամականության) գաղափարախոսությունը: Այն առաջին հերթին ուղղված էր հայերի, իսկ կայսրության սահմաններից դուրս՝ Ռուսաստանի դեմ, որի կազմում բնակվում էին թուրքալեզու և մահմեդական ժողովուրդներ:

Մուլթանը 1890-ական թթ. նախաձեռնում է հպատակ հայերի զանգվածային կոտորածներ: Ռ. Գասպարյանը մանրամասն քննում է Ադանայում և Կիլիկիայի այլ բնակավայրերում 1909 թ. իշխանությունների իրականացրած հայերի զանգվածային կոտորածները՝ գլխավորապես հիմնվելով ռուսական դիվանագիտական հաղորդումների, օտար և ականատեսների վկայությունների վրա: Յույց է տրվում, որ այդ բարբարոսական ծրագրին զոհ գնացին 30-35 հազար հայեր:

Ռ. Գասպարյանը ուսումնասիրության առարկան են Կիլիկիայի հայության ինքնապաշտպանական մարտերը, ապա՝ զանգվածային կոտորածներն ու բռնազաղթը: Այս հիմնահարցը լուսաբանելու նպատակով գիտնականն օգտագործել է արխիվային հարուստ նյութ ու գրականություն: Նա մանրամասն ներկայացնում է երիտթուրքական իշխանությունների նենգ ծրագրերն ու կոտորածների ընթացքը և հայերի ունեցած կորուստները:

Կիլիկիայի հայության միջնաբերդ Ջեյթունի հասարակությունը չկարողացավ ճիշտ կողմնորոշվել ստեղծված իրադրությունում: Բնակչությունը երփեղկվում է. մի մասը կողմ էր դիմադրության, իսկ մյուսները՝ կառավարության հրամանին ենթարկվելուն ու տեղահանվելուն: Ռ. Գասպարյանի դիպուկ բնորոշմամբ. «...միշտ միասնական Ջեյթունն այս անգամ խոնարհեց իր խրոխտ գլուխը...»:

Ռ. Գասպարյանը առանձին ենթագլխով ներկայացնում է Մուսա լեռան հերոսամարտը: Պատմաբանի գնահատմամբ, այդ հերոսամարտը «...հայ ժողովրդի փոթորկալի պատմության առասպել դարձած էջերից է, որը պսակվեց լիակատար հաջողությամբ: Այն մեկ անգամ ևս ապացուցում է, որ թուրք ոճրագործների դեմ հաջողության կարելի է հասնել միայն կազմակերպված և համառ դիմադրության շնորհիվ»:

Ռ. Գասպարյանն անդրադառնում է պատերազմի ընթացքում Անտանտի տերությունների կողմից օսմանյան կայսրության գաղութների բաժանման խնդրին: Մույն հիմնահարցին էր նվիրված 1916 թ. մայիսի 16-ին Լոնդոնում կնքված Մայքս-Պիկոյի հանրահայտ պայմանագիրը: Նույն թվականի հոկտեմբերի 27-ին Լոնդոնում համաձայնություն ձեռք բերվեց Մարկ Մայքսի, Ժորժ Պիկոյի և հայոց Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշայի միջև:

Օսմանյան կայսրության պարտությունը ողջ մնացած կիլիկիահայությանը հնարավորություն է տալիս վերադառնալ հայրենիք ու ձեռնամուխ լինել ավերված բնակավայրերի ու տնտեսության վերականգնմանը: Մակայն անգլիական միջամտությունը և ֆրանսիացիների անորոշ դիրքորոշումը պատճառ են դառնում, որ տեղի մահմեդականները գլուխ բարձրացնեն և սկսեն ընդհարումներ քրիստոնյաների հետ: Ճիշտ է, 1919 թ. փետրվարի 1-ից Կիլիկիայի վարչական

հսկողության նախագահը գնդապետ Է. Բրեմոնն էր, որը, սակայն, որևէ գործնական քայլ չկատարեց ինքնավարության վերաբերյալ խոստումն իրականացնելու համար:

Ազատագրական շարժման գործիչներից Միհրան Տամատյանի գլխավորությամբ ստեղծվում է Կիլիկիայի միջքրիստոնեից արտակարգ խորհուրդ, որը հուշագիր է հղում Փարիզում հրավիրված հաշտության համաժողովին՝ աջակցություն խնդրելով 275 հազար քրիստոնյաների համար: Ինչպես նշում է Ռ. Գասպարյանը, հայ գործիչները տեղյակ չէին ֆրանս-քեմալական մերձեցմանը և շարունակում էին հուսալ, որ Ֆրանսիան հանդես կգա Կիլիկիայի պաշտպանությամբ:

Ինքնին հասկանալի է, որ Ֆրանսիայի երկդիմի քաղաքականությունից օգտվում են թուրքերը: Ռ. Գասպարյանը մանրամասնորեն ներկայացնում է այն պատճառները, որոնք Մուստաֆա Քեմալին դրդում էին հարձակվել Կիլիկիայի հայության վրա:

Ռ. Գասպարյանը լուսաբանում է Մարաշի, Հաճընի, Այնթապի, Զեյթունի և այլ վայրերի հայության դուրսագնական մաքառումները: Վերլուծելով ֆրանսիական քաղաքականությունը Կիլիկիայում՝ Ռ. Գասպարյանը եզրակացնում է, որ «կիլիկիահայությունը զոհ գնաց նաև Ֆրանսիայի երկդիմի քաղաքականությանը, որը հանուն իր տնտեսական ու քաղաքական շահերի զոհեց նրան»:

Ռ. Գասպարյանի կենդանության օրոք լույս տեսավ Հայոց պատմության բազմահատորյակի համար նրա հեղինակած մասը՝ «Իրադրությունը Կիլիկիայում: Հայերի ինքնապաշտպանական մարտերը և կոտորածները» ենթագլուխը:

Ռուբեն Գասպարյանի՝ անխոնջ ու տաղանդաշատ գիտնականի և մըշտապես օգնության հասնող մարդու բարի հիշատակը թանկ և անմոռաց է հարազատների, ընկերների և գործընկերների համար: